ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.12.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 119/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 06.12.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-119/16 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՄՀ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը (այսուհետև նաև՝ Հրավեր), «ՄՀ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը և ԳԲԽ-119/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 22.12.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 06.12.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի համայնքապետարանի կողմից հայտարարված «ՄՀ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով պարզեցված ընթացակարգին, որին մասնակցության հայտեր են ներկայացրել նաև «Բիդեք» ՍՊԸ-ն և «Անիի ՃՇՇ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝

- 28.11.2016թ. թիվ 3 արձանագրության 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած բոլոր փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, քանի որ բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:
- 28.11.2016թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ որոշվել է Ընթացակարգի առաջին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչել «Անիի ՃՇՇ» ՍՊԸ-ին:

2016թ. դեկտոմբերի 2-ի «Պայմանագիր կնքելու մասին» թիվ 4 որոշմամբ «ՄՀ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հանձնաժողովն ընտրված մասնակից է ճանաչվել «Անիի ՃՇՇ» ՍՊԸ-ին և հանձնաժողովը հայտարարություն է հրապարակել Ընթացակարգով «Անիի ՃՇՇ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հոտ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) (...) անհիմն կերպով բարդացնում են կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 9-րդ

ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Ընդ որում, տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով՝ բացառությամբ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերի, որոնց ժամանակ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ընկերությունը նշել է, որ վերոհիշյալ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքում, Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, վերոնշյալ նորմը տարբերություն չի դնում մասնակցի կողմից էլեկտրոնային եղանակով ստորագրված և ներկայացված փաստաթղթերի ձևաչափերի միջև (Օրինակ՝ Microsoft Office Word, PDF և այլն):

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ վերջինիս կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված բոլոր փաստաթղթերը պատշաճ ձևով ստորագրված են և համապատասխանում են Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջներին:

Ընկերությունը նշել է նաև, որ կներկայացվի փաստաղթերի ստորագրված լինելու փաստն ապացուցող ԷԿԵՆԳ-ի կողմից տրված փաստաթուղթը:

Ըստ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի՝ Պատվիրատուն խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը՝ գնահատելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին չբավարարող:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է.

1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի համայնքապետարանի կողմից հայտարարված «ՄՀ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից օրենքի խախտմամբ կայացված որոշմամբ Պատվիրատուի և «Անիի ՃՇՇ» ՍՊԸ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը և այդ պայմանագրի հետ կապված որևէ գործողության իրականացումը, այդ թվում նաև պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը:

2. «ՄՀ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը պատշաճ չգնահատելու հետևանքով անվավեր ճանաչել 2016թ. նոյեմբերի 28-ի «ՄՀ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից նիստի «Արձանագրություն N 3»-ի 1-ին կետի 5-րդ ենթակետը, 2-րդ կետի 1-ին ենթակետը և 2016թ. դեկտեմբերի 2-ի «Պայմանագիր կնքելու մասին» թիվ 4 որոշումը:

3. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը ճանաչել հրավերի պահանջներին համապատասխան:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 13.12.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-119/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստի ժամանակ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդել է բողոքով ներկայացրած դիրքորոշումը և հայտնել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի բոլոր փաստաթղթերը հաստատված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2. ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Կենտրոնը 08.12.2016թ. թիվ 01/04.1/4484-16 գրությամբ դիմել է ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի համայնքապետարանին՝ խնդրելով եռօրյա ժամկետում ներկայացնել Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի համայնքապետարանը հրաժարվել է տրամադրել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած ***էլեկտրոնային հայտը***:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 13.12.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-119/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստին ներկա էին նաև ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի համայնքի ղեկավար Ա. Գևորգյանը և Մարալիկի համայնքապետարանի գլխավոր մասնագետ Ս. Զաքարյանը, որոնք հրաժարվեցին ներկայացնել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտը:

3. ԳԲԽ-119/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 22.12.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 06.12.2016թ. ներկայացված բողոքը մերժել:

4. ԳԲԽ-119/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-119/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի համայնքապետարանի կողմից կազմակերպվել է «ՄՀ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն, «Բիդեք» ՍՊԸ-ն և «Անիի ՃՇՇ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի 7.9 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են ***էլեկտրոնային թվային ստորագրությամբ:***

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Գնահատող հանձնաժողով) 28.11.2016թ. թիվ 3 արձանագրության 1-ին կետի 5-րդ ենթակետով կայացված որոշմամբ մերժել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, քանի որ բոլոր փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին և բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

4. Գնահատող հանձնաժողովը 28.11.2016թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 1-ին ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի առաջին տեղը զբաղեցնող մասնակից է ճանաչել «Անիի ՃՇՇ» ՍՊԸ-ին:

5. 2016թ. դեկտոմբերի 2-ի «Պայմանագիր կնքելու մասին» թիվ 4 որոշմամբ «ՄՀ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հանձնաժողովն ընտրված մասնակից է ճանաչվել «Անիի ՃՇՇ» ՍՊԸ-ին և հանձնաժողովը հայտարարություն է հրապարակել Ընթացակարգով «Անիի ՃՇՇ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին:

6. Կենտրոնը 08.12.2016թ. թիվ 01/04.1/4484-16 գրությամբ դիմել է ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի համայնքապետարանին՝ խնդրելով եռօրյա ժամկետում ներկայացնել Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի համայնքապետարանը հրաժարվել է տրամադրել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած ***էլեկտրոնային հայտը***:

7. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 13.12.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-119/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստին ներկա էին նաև ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի համայնքի ղեկավար Ա. Գևորգյանը և Մարալիկի համայնքապետարանի գլխավոր մասնագետ Ս. Զաքարյանը, որոնք հրաժարվեցին ներկայացնել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտը:

8. Մինչև ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից սույն որոշման կայացումը Ընկերությունը չներկայացրեց «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը սահմանված

կարգով էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու վերաբերյալ որևէ ապացույց:

9. Կենտրոնի կողմից www.gnumner.am համացանցային կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Պատվիրատուի կողմից հրապարակվել է «ՄՀ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը, որի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. դեկտեմբերի 15-ի թիվ 5 որոշման համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը, ուսումնասիրելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 06.12.2016թ. ներկայացրած բողոքը, Հրավերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), «ՄՀ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը հայտնում է հետևյալը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.11.2016թ. թիվ 3 արձանագրության 1-ին կետի 5-րդ ենթակետով կայացված որոշմամբ մերժել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, քանի որ բոլոր փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին և բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

Գնահատող հանձնաժողովը 28.11.2016թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 1-ին ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի առաջին տեղը զբաղեցնող մասնակից է ճանաչել «Անիի ՃՇՇ» ՍՊԸ-ին:

Մինչև ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից սույն որոշման կայացումը Ընկերությունը չներկայացրեց «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը սահմանված կարգով էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու վերաբերյալ որևէ ապացույց:

Բացի այդ, Կենտրոնը 08.12.2016թ. թիվ 01/04.1/4484-16 գրությամբ դիմել է ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի համայնքապետարանին՝ խնդրելով եռօրյա ժամկետում ներկայացնել Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի համայնքապետարանը հրաժարվում է տրամադրել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած ***էլեկտրոնային հայտը***:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 13.12.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-119/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստին ներկա էին նաև ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի համայնքի ղեկավար Ա. Գևորգյանը և Մարալիկի համայնքապետարանի գլխավոր մասնագետ Ս. Զաքարյանը, որոնք հրաժարվեցին ներկայացնել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտը:

Անհրաժեշտ է նշել, որ Կենտրոնի կողմից www.gnumner.am համացանցային կայքի ուսումնասիրության արդյուքնում պարզվել է, որ Պատվիրատուի կողմից հրապարակվել է «ՄՀ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը, որի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. դեկտեմբերի 15-ի թիվ 5 որոշման համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:

Ուսումնասիրելով Ընթացակարգը չկայացած հայտարարելու իրավական հիմքը՝ Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն իրավասու էր Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ նման պայմաններում «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը դարձել է առարկայազուրկ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 06.12.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Լուսինե Ոսկանյան**

Անդամ՝ **Լեոնիկ Խաչատրյան**